Այստեղ կրկին մտքերի մեջ ընկա, թե սա ինչ զուգահեյություն էր: Ես ինչպես պատահեց, որ միշտ լուռ Զանակ տառիկն ջարդի մասին եկավ ինձ պատմելու այն ժամանակ, երբ կարդում էի այդ մասին: Այն էլ այն պահին, երբ կարդում էի Սեբ-Զորի հասնող տարբախտ աքսորյալների մասին:

Զանակ տառիկն նկատեց, որ ես շատ զարմացա, հարցրեց.

- Ինչո՞ւ մտքերի մեջ ընկներ: Փոխանակ պատասխանելու, ասի՜ մի րոպե, ու վազեցի առո՞ք բերեցի, որ Զանակ տառիկն մտնի: Նա դեռ չմտած՝ հարցրի.

- Զանակ տառիկ, եթե իրոք Սեբ-Զորում եղել եք, չի՞ք պատմի այն մասին, թե ի՞նչ է եղել:

- Հիմա կպատմեմ,- ասաց լացակունամ,- եկել եմ, որ պատմեմ:

Ու լացակունամ էլ սկսեց զրույցը.

- Ի՞նչ պատմեմ, ի՞նչ ասեմ: 42 տարի առաջ, ջարդի ժամանակ կորցրած բախլիկ՝ Սամվել, գտնվեց Քելթրուսում... Ախ, Սամվել, մատաղ լինեմ քո հոգում: Աստծո գործումը մատաղ, որ այդքան բարի եղավ, այդքան ժամանակ պահեց որդուս: Հիմա ուզում եմ՝ մի դուռ բաց անի, որ տեսնեմ նրան:

- Գուցու՛մ, որ օգնես, կարողանամ Սամվելիս տեսնել, եթե դա հնարավոր է:

Այստեղ Զանակ տառիկն խիստ հուզվեց, սկսեց աչքերի արցունքները սրբել: Որպեսզի խոսք բացեմ, ասացի.

- Զանակ տառիկ, ուրեմն դուք աքսորված եք եղել: Զի՞ք պատմի՜ ինչպե՛ս աքսորեցին, ինչպե՛ս կորցրիք Սամվելին:

- Ա՛խ, դա երկար ու ծանր պատմություն է,- սկսեց նա,- հայերի ջարդի մասին, ասում ես, լսել ես ու կարդացել: Էլ ինչ պատմեմ: Ինձ երկու անգամ եմ աքսորել: Երբ սկսվեց Մեծ եղբունը, ապրում էինք Օրդուի գավառակի Քիրեզ դերե գյուղում: Ամուսնուս՝ Չենկետյան Նաչիկին բանակ գորակոչեցին: Տանը մնացի երեք տարեկան Սամվելիս հետ: Կարծեմ հունիս ամսին էր, հայտարարեցին, թե մեզ տանում են Մոսուլ: Պատրաստվելու համար երեք օր ժամանակ տվեցին ու ասեցին, որ ով ինչ ցանկանա, կարող է վերցնել հետը: Միայն ինչ որ կարող է տանել ծեռքով: Ամեն մեկն իր դարդ ու ցավն ուներ: Իսկ ես մտածում էի, թե ինչպես հետս տանի երեք տարեկան երեխային՝ Սամվելիս: Այդքան երկար ճանապարհ երեխան քայլել էր կարող, շալակիս էլ տանել չէի կարող: Իսկ թե ինչ էր սպասում մեզ ճանապարհին, չգիտեի: Հասկացող մարդիկ ինձ խորհուրդ տվեցին նրան մի տեղ թողնել: Ասում էին, որ երեխան չի դիմանա:

Որոշեցի ու երեխային թողեցի մի ծանոթ թուրքի մոտ: Նշանակված օրը մեզ հավաքեցին գյուղի կենտրոնում ու անասունի մահաբշեցին տարան:

Ամենը, ինչ կատարվում էր, հնարավոր չէ պատմել, ու չես էլ պատմի: Շուրջ տիրոջը չէր ճանաչում: Աքսորի հենց սկզբից անտանելի դարձավ շատ երեխա ունեցողների, հիվանդների, հղի կանանց ու ծերերի վիճակը: Մահաց բոլորին մեզանից անջատեցին, ասելով, որ նրանց առանձին կտանեն: Հետո միայն իմացանք, թե ինչ է կատարվել նրանց հետ: Նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց: Ծանապարհին ծեռք, զազանությունը, շնությունը, սպանությունը մեր մշտական ուղեկցիները դարձան:

Ա՛խ, խեղճ աքսորյալներ: Ոչ ոք չէր ուզում հեռանալ հարազատ տունտեղից: Շատերին գողով էին տնից դուրս բերում: Ոմանք նույնիսկ տնից դուրս չեկան ու զոհվեցին: Սկզբում սրտունս ցավ կար, որ տունտեղ թողեցի ուրիշին, բայց գնալով տունն էլ մոռացա, տեղն էլ: Միակ հարցը, որ կար, ողջ մնալն էր:

Սկզբում, եթե ետ մնացողին անասունի մահ գանահարում էին, ստիպում, որ հասնեն մյուսներին, ապա հետո այդպես չէր. սպանում էին:

Գնում էինք օրերով, առավոտից իրիկուն, արևին ու կրակ-շոգին: Քնում էինք բացօթյա: Շատերն արևահար եղան, հիվանդացան: Ծանապարհի պաշարներս վերջացան, իսկ ճանապարհը՝ ոչ: Մնացինք սոված, ծարավ: Ծանապարհին մեզ միացանք էին այլևայլ գյուղերից աքսորվածներին: Կին, երեխա, տղամարդ ընդունում էին միասին: Ձուգարանի կարիքի դեպքում պետք էր թույլատվություն խնդրել: Իսկ շատ հաճախ մարդկանցից թաքնվելու տեղ չէր լինում: Այդ դեպքում կանայք շրջապատում, օգնում էին միմյանց: Իսկ տղամարդիկ երեսներն էին թեթև: Իսկ եթե թաքնվելու տեղ չի լինում, թուրքը գալիս էր հետո, որ չփախչես:

Ոչ ամոթ ունեին, ոչ խիղճ: Պառավ կանայք այդ թուրքերին «շուն» էին անվանում ու ասում, որ եթե շունը ամոթ ունենար, շալվար կհագներ ու ամոթը կօձակեր: Անխիղճ Աստված ստեղծեց հայերին ու թուրքերի առաջ ծաղրածանակի առարկա դարձրեց:

Մարդիկ սովից հյուսվեցին, բայց ծարավն ավելի էր տանջում, բան սովը: Ուժասպառ լինողներն ընկնում էին ճանապարհին ու գնում այս աշխարհից: Տեսնողը կասե՛ր՝ դժոխքի քարավանն է գնում: Գնալով թալանը, բռնաբարությունը, արվանդությունը, ծեռքն սպանությունները հաճախակի դարձան:

Մեկ էլ տեսար, չգիտես որտեղից, հայտնվեցին բաշխեցուկներն ու սկսեցին իրենց սև գործը: Մեկը գնում էր, մյուսն էր գալիս: Հոտը մեծ էր, հոշոտում էին՝ որքան կարող էին:

Ամուսնելի դարձավ ջահել, գեղեցիկ աղջիկների ու տղաների վիճակը: Մահաց բռնում տանում, ինչքան ասես չէին անում, կամ սպանում, կամ վիրավոր, սովոր բաց էին թողնում: Իսկ շատ անգամ թուրքերը հարձակվում էին զուտ գյավուր սպանելու համար, որ դրախտ գնան: Հղի կանանց վիճակն ավելի վատ էր: Նրանց օգնող չկար: Վիժելը մահ էր: Թուրքերն այդ կանանց ավելի թշնամաբար էին վերաբերվում, ասելով՝ եղ էր պակաս, որ մեր թշնամու ցեղն ավելացնե՞ր:

գետը զգե՞լ՝ ճշաց ու ինձ փաթափվեց: Վախից դողում էր:

Մարդիկ ծարավից մեռնում էին՝ մայելով կողքից հոսող գետի ջրերին: Ո՛վ կարող էր համարձակվել գետը ջրի գնալ: Սպանում էին տեղնուտեղը:

Երեխայի մահանելուց հետո գնալը ֆիզիկապես թեթևացավ, բայց հոգեպես տկարացա: Սամվելս չլինել, էլ ասլել էլի ուզում: Խեղճն ամբողջ ճանապարհին հաց ու ջուր էր ուզում՝ մայելով կողքից հոսող գետի ջրերին ու շալակիս հացի տոպրակին, որի մեջ հոգապահուստ հացի կտորներ էի պահում:

Մարդիկ օգնում էին իրար: Մեզ էլ դժվար պահերին հացի կտորներ ու ջուր էին տալիս:

Այդ վիճակում մեզ ընդ թուրքերից մեկը կպավ ինձ, թե՛ երեխան թող, ամուսնանանք: Ինչքան էլ որ չէի համաձայնում, հանգիստ չէր տալիս ոչ գիշերը, ոչ ցերեկը: Մեկ էլ տեսար՝ կեսգիշերին կամաչում էր, թե՛ արի ամանները լվա: Կարող էս չգնալ: Փորձիր, եթե ասլել չես ուզում: Խեղճ երեխային արթնացնում էի ու տանում հետս: Թուրքն սպառնում էր Սամվելի կյանքին: Ասում էր, որ եթե չհամաձայնեմ, կսպանի Սամվելին: Իսկ մյուս կողմից առաջարկում էր օգնել ինձ: Իրոք, մի քանի անգամ հաց ու ջուր տվեց, բայց դրանք խաղեր էին Սամվելի գլխին: Ի՞նչ կարող էի անել: Խեղճ երեխան չէր էլ կասկածում, թե ինչ էր սպասում նրան:

Մի տեղ ճանապարհը թեքվեց գետից, հեռացավ դեպի անջրդի, անբնակ վայրերը: Ձրի հարցն ավելի բարդացավ: Մահվան գնդ գետից ջուր գողանալու հիյսն էլ չբացավ: Մարդիկ ասում էին, որ գետի փերը լիքն են դիակներով:

Օրերով ու գիշերներով փոշու ու կեղտի մեջ բացօթյա մնալը, արևին ու շոգին վառվելը անտանելի դարձան: Իսկ մյուս կողմից բաշխեցուկների բռնությունները, սպանություններն ու թալանը չէին դարձրել: Իսկ երբեմն մեզանից ցանկացածին բռնում էին, տանում: Տանում էին հատկապես գեղեցիկ, ջահել կանանց ու աղջիկներին, չնայած նրան, որ մարդիկ այնքան էին հյուսվել, որ այլևս գեղեցկություն էր մնացել:

Գնալով քարավանում տղամարդ չմնաց, նրանք բոլորը զոհվեցին: Մնացին կանայք, երեխաներն ու աղջիկները:

Մի տեղ ճանապարհին հեռվից շատ տներ երևացին: Մարդիկ ասացին, որ դա Դիարբեքի քաղաքն է: Ասացին, որ այնտեղ հայ հացթուխներ շատ կան, եթե հնարավոր լինի այնտեղ գնալ, հայերը մեզ կօգնեն հացով ու ջրով: Բայց ո՞վ կարող էր այդպիսի հերոսություն գործել: Ամենադժվարը խմբից հեռանալն էր: Եթե թուրքերը նկատեին, կսպանեին տեղնուտեղը:

Մի կողմից խորհելուց հետո կանայք որոշեցին երեք երեխա ուղարկել: Ընտրեցին Սամվելին, Միմասյան Արթինի տղային՝ Եղիային, ու էլի մի ուրիշ, մոտ 10-11 տարեկան տղայի: Ես չէի համաձայնվում Սամվելին ուղարկել, որովհետև նա այնքան ամաչկոտ էր, այնքան աչքափակ, որ եթե նրա կանգնեց նրա հետ խոսեր, նա լաց կլիներ: Նրան թուրքերն անմիջապես կբռնեին ու կսպանեին: Բայց երբ ինձ ասացին, «Քո երեխան երեխա է, մերը երեխա չի՞, ինչ է՞», ես կտարվեցի:

Սամվելն առանց այն էլ արևահար էր եղել, հազվի էր քայլում: Իսկ մյուս կողմից թուրքն էր սպառնում նրա կյանքին: Հիշեցի, թե ինչպես շատ երեխաների թուրքերը զգե՞լ՝ ճշաց ու ինձ փաթափվեց: Վախից դողում էր:

# 43 ՏԱՐԻ ԱՆՑ

Մարդիկ ծարավից մեռնում էին՝ մայելով կողքից հոսող գետի ջրերին: Ո՛վ կարող էր համարձակվել գետը ջրի գնալ: Սպանում էին տեղնուտեղը:

Երեխայի մահանելուց հետո գնալը ֆիզիկապես թեթևացավ, բայց հոգեպես տկարացա: Սամվելս չլինել, էլ ասլել էլի ուզում: Խեղճն ամբողջ ճանապարհին հաց ու ջուր էր ուզում՝ մայելով կողքից հոսող գետի ջրերին ու շալակիս հացի տոպրակին, որի մեջ հոգապահուստ հացի կտորներ էի պահում:

Մարդիկ օգնում էին իրար: Մեզ էլ դժվար պահերին հացի կտորներ ու ջուր էին տալիս:

Այդ վիճակում մեզ ընդ թուրքերից մեկը կպավ ինձ, թե՛ երեխան թող, ամուսնանանք: Ինչքան էլ որ չէի համաձայնում, հանգիստ չէր տալիս ոչ գիշերը, ոչ ցերեկը: Մեկ էլ տեսար՝ կեսգիշերին կամաչում էր, թե՛ արի ամանները լվա: Կարող էս չգնալ: Փորձիր, եթե ասլել չես ուզում: Խեղճ երեխային արթնացնում էի ու տանում հետս: Թուրքն սպառնում էր Սամվելի կյանքին: Ասում էր, որ եթե չհամաձայնեմ, կսպանի Սամվելին: Իսկ մյուս կողմից առաջարկում էր օգնել ինձ: Իրոք, մի քանի անգամ հաց ու ջուր տվեց, բայց դրանք խաղեր էին Սամվելի գլխին: Ի՞նչ կարող էի անել: Խեղճ երեխան չէր էլ կասկածում, թե ինչ էր սպասում նրան:

Մի տեղ ճանապարհը թեքվեց գետից, հեռացավ դեպի անջրդի, անբնակ վայրերը: Ձրի հարցն ավելի բարդացավ: Մահվան գնդ գետից ջուր գողանալու հիյսն էլ չբացավ: Մարդիկ ասում էին, որ գետի փերը լիքն են դիակներով:

Օրերով ու գիշերներով փոշու ու կեղտի մեջ բացօթյա մնալը, արևին ու շոգին վառվելը անտանելի դարձան: Իսկ մյուս կողմից բաշխեցուկների բռնությունները, սպանություններն ու թալանը չէին դարձրել: Իսկ երբեմն մեզանից ցանկացածին բռնում էին, տանում: Տանում էին հատկապես գեղեցիկ, ջահել կանանց ու աղջիկներին, չնայած նրան, որ մարդիկ այնքան էին հյուսվել, որ այլևս գեղեցկություն էր մնացել:

Գնալով քարավանում տղամարդ չմնաց, նրանք բոլորը զոհվեցին: Մնացին կանայք, երեխաներն ու աղջիկները:

Մի տեղ ճանապարհին հեռվից շատ տներ երևացին: Մարդիկ ասացին, որ դա Դիարբեքի քաղաքն է: Ասացին, որ այնտեղ հայ հացթուխներ շատ կան, եթե հնարավոր լինի այնտեղ գնալ, հայերը մեզ կօգնեն հացով ու ջրով: Բայց ո՞վ կարող էր այդպիսի հերոսություն գործել: Ամենադժվարը խմբից հեռանալն էր: Եթե թուրքերը նկատեին, կսպանեին տեղնուտեղը:

Մի կողմից խորհելուց հետո կանայք որոշեցին երեք երեխա ուղարկել: Ընտրեցին Սամվելին, Միմասյան Արթինի տղային՝ Եղիային, ու էլի մի ուրիշ, մոտ 10-11 տարեկան տղայի: Ես չէի համաձայնվում Սամվելին ուղարկել, որովհետև նա այնքան ամաչկոտ էր, այնքան աչքափակ, որ եթե նրա կանգնեց նրա հետ խոսեր, նա լաց կլիներ: Նրան թուրքերն անմիջապես կբռնեին ու կսպանեին: Բայց երբ ինձ ասացին, «Քո երեխան երեխա է, մերը երեխա չի՞, ինչ է՞», ես կտարվեցի:

Սամվելն առանց այն էլ արևահար էր եղել, հազվի էր քայլում: Իսկ մյուս կողմից թուրքն էր սպառնում նրա կյանքին: Հիշեցի, թե ինչպես շատ երեխաների թուրքերը զգե՞լ՝ ճշաց ու ինձ փաթափվեց: Վախից դողում էր:

Գնալով աքսորյալներն այնքան հյուսվեցին, թուլացան, որ ուրվականներ դարձան: Մարդիկ էլ ուժ չունեին դիմադրելու թուրքերին, ուստի չէին էլ փորձում դիմադրել: Միայն ջահել աղջիկներն ու տղաները, գիտեցավ, որ դիմադրելը մահ է, դիմադրում էին ու զոհվում: Այդպես շատ քչերս հասանք Մոսուլ: Այնտեղ մեզ ազատ արձակեցին, ասեցին, որ գնանք ծառայեցինք մուսուլմաններին ու ապրե՞ք: Բայց ի՞նչ ապրել. պետք էր գոյություն պահպանել, որը հեշտ չէր: Շատերին դա չհաջողվեց: Ով պատահեց, վերցնում էր տանում մեզ, աշխատացնում մի փոքր հացի տեղ: Ինչ գործ ասես չէինք անում: Մի տարի հետո մի թուրք տարավ ինձ Աղանայի կողմերը : Իսկ հետո տարան Սեբ-Զորի կողմերը: Երեք տարի հետո մեզ ազատություն տվեցին: Վերադարձա տուն, բայց մեր տներում թուրքերն էին մտնում: Գնացի թուրքի մտնից վերցրի Սամվելին: Ամուսնուս բանակից փախել, թաքնվել էր անտառում: Եկավ ինձ գտավ: Երեք տարի ազատ ապրեցինք Օրդուում, մի աքսորված հայի տանը, որտեղ ոչ ոք չէր ապրում: Տանտիրոջն ընտանիքով աքսորել էին: Երկի նրանցից ոչ ոք կենդանի չէր մնացել: Նման ազատ տներ շատ կային: Այդ ազատ ապրած տարիներին մի երեխա էլ ունեցանք: Կարծեմ 1921 թվականն էր, մի գիշեր եկան ամուսնուս բռնեցին ու տարան: Այլևս նրան չտեսա: Մեզ կրկին աքսորեցին: Այս անգամ Սամվելս 8 տարեկան էր, արդեն կարգին կարող էր քայլել: Իսկ կրծքի երեխային հնարավոր չէր զոհվել մեկի մոտ թողնել:

Վերցրի կրծքի երեխային, բռնեցի Սամվելի ձեռքից ու ճանապարհի պաշարս շալակած ճանապարհի ընկա: Գիտեի, թե ի՞նչ է սպասում մեզ, բայց ինչ կարող էի անել: Հազվի 3 օրվա պաշար ունեի: Կրկին ամենուրեք հայերի լաց ու կոծ էր: Կրկին, երբ բաղաձից հեռացանք, քայլել դժվարացողներին մեզանից անջատեցին ու ասացին, որ նրանց սայլով կտանեն: Բայց ես գիտեի, թե ինչ է սպասում նրանց:

Գնում էի ծծկեր երեխան կրծքիս, Սամվելի ձեռքը բռնած: Վախեցում էի Սամվելին կորցնել: Կորցնելը հեշտ էր շատ, գտնելը՝ դժվար: Կորածը կորած էր:

Էլի նույն գազանություններն էին, նույն թալանը, բռնաբարություններն ու սպանությունները, բայց ոչ այնքան մեծ չափով, որքան առաջին անգամ: Որովհետև հոտն այս անգամ այնքան մեծ չէր, որքան առաջին անգամ: Կրկին մարդիկ սովից ու ծարավից հյուսվեցին: Կրկին նրանց կաշին ու ուսկորը մնաց: Շատերն ուժասպառ ընկան ճանապարհին ու գնացին այս աշխարհից: Ես ի վիճակի չէի կերակրել կրծքի երեխայիս, Սամվելս արևահար էր եղել, հազվի էր քայլում: Կրծքի երեխան օրերով սովատանջ լաց էր լինում ու ինձ փաթափվում, բայց ես նրա համար ուտելու ոչինչ չունեի: Խեղճ երեխան ինձ ու քսորի գոհն է դառնալու: Երեխան կրծքիս լաց եղավ, լաց եղավ ու ձայնը հավիտյան կորեց՝ մահացավ: Սիրտս պոկվեց տեղից: Լաց էի լինում ու գնում՝ գրկն ու մահացած, փայտացած երեխային, թաքցնելով նրա մահը մարդկանցից: Միևնույն ժամանակ աշխատում էի լացս թաքցնել Սամվելից: Խեղճ երեխան աչքերիս արցունքները տեսնելիս ինքն էլ լաց էր լինում:

Որոշ ժամանակ անց թուրքերն իմացան, որ երեխան մահացել է, վերցրին երեխային ձեռքիցս ու կողքից հոսող գետը զգեցին: Խեղճ Սամվելս երբ ու տեսավ երեխային



քերը տարան, ինչ շնութուններ արին, սպասեցին կամ վիրավոր ու տկար բաց թողեցին: Իսկ ոմանց ծնողների աչքի առաջ մորթեցին: Իսկ մյուս կողմից այնքան էլ հույս չունեի հիվանդ երեխային կենդանի տեղ հասցնել: Այս բոլորը ծանրութեթև անելուց հետո համաձայնեցի Սամվելին ուղարկել: Իսկ երբ Սամվելին հարցրի:

- Կարո՞ղ ես տղաների հետ գնալ այն երևացող քաղաքն ու հաց ու ջուր բերել, երեխան զարմացած նայեց ինձ, թե ի՞նչ եմ ասում: Արդյոք լու՞րջ եմ ասում, թե՞ կատակ եմ անում: Թե ինչպե՞ս կարող է այդպիսի բան անել: Երեխան, անգամ, չպատասխանեց, կպավ ինձ ու կուչ եկավ:

Ես ու մյուս երեխաների մայրերն սկսեցինք Սամվելին համոզել, որ չվախենա, գնա տղաների հետ: Երևում էր՝ մյուս տղաներն աչքաբաց էին, նրանք էլ սկսեցին համոզել Սամվելին: Սամվելը մոլորված մեկ մեկին էր նայում, մեկ՝ մյուսին: Բայց տեսնելով, որ տղաները չեն վախենում, վերջում սիրտ առավ ու ինքն էլ համաձայնվեց և գնաց տղաների հետ՝ մի հարմար տեղ ծլկելով խմբից:

Ճիշտն ասած, խիղճս տանջում էր, որ երեխային իմ ձեռքով թուրքերի ձեռքն ուղարկեցի: Բայց մյուս կողմից մտածում էի, որ գոնե աչքովս չեմ տեսնի նրա սև օրը:

Ըստ պայմանի, երեխաներն այդ օրը երեկոյան ետ պիտի վերադառնային:

Բայց երեկոյան ետ վերադարձավ միայն մեկն առանց հաց ու ջրի: Իսկ Սամվելն ու եղիան չկային: Այդ երեխան ասաց, որ երբ նրանք մտնեցին էին քաղաքին, թուրքերը նկատեցին ու հարձակվեցին նրանց վրա: Նրանք փախան՝ ով ուր կարող էր: Իսկ թե ուր մնացին Սամվելն ու եղիան, չգիտեր: Ի՞նչ կարող էի անել: Ոչինչ: Կարծեցի, որ նրանց սպանեցին, որովհետև Սամվելը երբեք առանց ինձ չէր մնա: Լալիս էի ու գնում: Կանայք ինձ հուսադրում էին, թե երեխան կենդանի կլինի: Բայց զգում էի, որ նրանք էլ ինձ նման հույս չունեին, միայն հուսադրում էին ինձ: Այդպես էլ գնաց, կորավ ու կորավ անմեղ բալիկս:

Պիլեռ-գրեթե լալիս էի ու աղոթում Աստուծուն, որ Աստված իմ հոգին առնի, միայն իր բարի ձեռքը Սամվելիս վրա պահի: Բալիկներիս, ամուսնուս, տունուտեղ կորցրած, մտած դժոխքի քարավանը, մոլորված, լալով գնում էի դեպի անապատները... Քարավանը քանի գնում ցամաքում էր: Էլ մարդու նման չէիմք, մեզ անասունի նման ծեծում էին ու քշում: Գնալով քարայրների թիվն այնքան քչացավ, որ կրկին մնացինք մի խումբ կանայք ու աղջիկներ: Հասանք Մոսկու: Այնտեղ մեզ բաց թողին՝ կրկին բաժանելով փոքր խմբերի: Ես գնացի իմ ծանոթ թուրքի մոտ, ուր եղել էի առաջին անգամ: Ինձ լավ ընդունեցին: Շտառ դարձա: Մի տարի քաղաք եկա մեկին-մյուսի մոտ... Այն, ամեն ինչ չես պատմի: Որքան անտանելի է, երբ դու քոնը չես: Երբ ուրիշն է քո գլխի տերը, թեկուզ երեխա կամ զամառյալ պառավ լինի: Կասի՞ չոքիր, ու կչոքես, եթե ուզում ես կենդանի մնալ:

Մեզ համար ոչ ցուրտ կար, ոչ արև, ոչ շոգ, ոչ գիշեր, ոչ ցերեկ, ոչ թեթև, ոչ ծանր, ոչ էլ հանգիստ: Շատերը չգիմացան այդ ծանր օրերին ու մահացան: Մի տարի հետո մեզ կրկին ազատ արձակեցին: Բայց ո՞ւմ էր պետք այդ ազատությունը: Այդ երկար տարին մի օր աչքերիս արցունքը չի ցամաքել: Կրկին ջարդված սրտով վերադարձա Օրդու, կորցրած բոլոր հարազատներիս, բացի մեծ եղբորիցս՝ Գալստյան Կարապետից, որ ապրում էր Ռուսաստանում:

Օրդու քաղաքում ծանոթներ գտա: Շատերը եղե՞նքի ժամանակ անտաններում քաքված հայ տղամարդիկ էին: Մոտ 80 հոգի գաղտնի նավակ վարձեցին ու նավակով եկանք Ադլեր: Ես գնացի եղբորս՝ Կարապետի մոտ, որ բնակվում էր Գագրայի շրջանի Օտլուղ գյուղում, որ գտնվում էր Պիլեցկոյից վերև: Ամուսնացա Ջանսուզյան Սեդրակի հետ, երեխաներ ունեցա:

Անցավ 42 տարի, ինչ կորցրի Սամվելիս: Մարդ 42 տարի առաջ կորցրածին զգնելու ինչքա՞ն հույս կունենա: Բայց քանի որ Սամվելիս մահն աչքով չէի տեսել, հույսս չէի կորցրում ու չէի դադարում փնտրել: Նա իմ սրտում միշտ կենդանի էր ու միշտ 8 տարեկան: Շատ ու շատ մարդիկ եղե՞նքի ժամանակ կորցրած հարազատներին գտան աշխարհի տարբեր ծայրերում: Ամեն անգամ, երբ լսում էի, թե որևէ մեկը գտել է իր հարազատին, վառված սրտիս մոխիրների տակ թաղված հույսի կայծերը բոցվում էին, ու ավելի եռանդով էի փնտրում: Փնտրում էի աշխարհի տարբեր մասերում: Վերջապես, ինչպես

ասացի, բախտը ժպտաց, Սամվելս գտնվեց Բեյրութում:

Մինչև գտնվելը բոլորն ինձ ասում էին՝ 42 տարի անցնելուց հետո ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես փնտրում: Իմ երեխաներն այդ չէին ասում, բայց նրանց վերաբերմունքն այդ էր ասում: Իսկ ոմանք բացիեաց ասում էին ինձ, թե իբրև ժամանակ եմ վառում: Յետն էլ ավելացնում, թե ի՞նչ արած, մոր սիրտ է, թող փնտրի:

Այդքան ժամանակ անցնելուց հետո ո՞վ էր սպասում այսպիսի բախտի, արևի ու հրաշքի: Երբ Սամվելիս նկարը ստացա, քիչ էր մնում ուրախությունից ու շքեզ, գծվեցին: Ճիշտն ասած, 42 տարի անցնելուց հետո ես էլ այնքան հույս չունեի, որ կգտնեմ Սամվելիս, բայց չփնտրել չէի կարող: Չէի կարծում, թե Աստված այսքան բարի կլինե՞ր, որ էն աշխարհից որդուս կնվիրե՞ր ինձ: Հիմա ուզում եմ տեսնել բալիկիս: Ա՛խ, բալիկս, տեսնելու բախտ կվիճակվի՞ արդյոք, - ասաց ու լաց եղավ:



Ջանակ տատին

Մի քիչ հանգստանալուց հետո Ջանակ տատին ներողություն խնդրեց, որ ինձ անհանգստացրեց, հետո խնդրեց, որ Սամվելին նամակ գրեմ ու օգնեմ, որ գոնե մի րոպե տեսնի նրան, եթե դա հնարավոր է, որպեսզի հանձնվի, որ իրոք կենդանի է: Վազեցի, թուրք ու գրիչ վերցրի, եկա: Հարցրի:

- Սամվելի հասցեն ունե՞ք:

Ասաց, որ ունի, ու ծոցից հանեց մի փոքր կապոց, որտեղ պահում էր Սամվելի հասցեն: Վերցրի Սամվելի հասցեն, ու պատրաստվեցի գրել ու հարցրի:

- Ի՞նչ գրեմ:

Ասաց, որ ինքը կթելադրի, ես կգրեմ: Ասացի՜ լավ:

- Կներես, - ասաց, - որ գրելու ես անգրագետիս թելադրած: Միայն նրա ուշադրություն մի դարձնիր, - ու սկսեց թելադրել:

- Սամվելս, բալիկս, անուշիկս, - ու էլի հուզվեց, աչքերին արցունքի կաթիլներ երևացին: Այդպես էլ լացակունամ սկսեց թելադրել:

- Բալիկս, արդյոք իրո՞ք կենդանի ես, թե՞ չէ: Արդյոք Աստված դամաթ կանի՞ իրար տեսնել, թե՞ չէ: Իրո՞ք այդտեղ ես, թե չէ, յավրիկս... Ինչպե՞ս ես, տղաս... Ա՛խ, շատ ու շատ եմ կարոտել... Արդյոք դո՞ւ էլ մեզ նման արևին ու լուսինին նայում ես, թե՞ չէ: Բալիկս, եթե նայում ես, գոնե լուսնին ու արևին նայելով մի քիչ կարոտս կառնեմ: Եթե քեզ չտեսնեմ էլ, Աստված տա՛՛ դու կենդանի լինես, ողջ ու առողջ լինես, լավ լինես, բալիկս, ուրիշ ոչինչ չեմ ուզում:

Այստեղ մի քիչ հանգստանալուց հետո շարունակեց.

- Բալիկս, որտե՞ղ կորար, որտե՞ղ մնացիր: Աշխարհը վառվում էր, որտե՞ղ գլուխդ պահեցիր կրակից: Ինչպե՞ս կենդանի մնացիր: Քանի՞ տարի Տեր-Ջորի անապատները չափչփեցի: Ի՞նչ գիտեի, որ կենդանի ես, կամ որտեղ ես, որ գայի օգնել: Անուշ բալիկս, քեզ լավ նայիր, քաղցած, ծարավ մի մնա: Անուշ բալիկս, գրում եմ այս նամակն ու վախենում եմ, որ այս բոլորը երագ չլինի: Աստված որ այսքան բարի եղավ, բայց մի դուռ էլ կբանա, ու իրար կտեսնենք: Ա՛խ, տղաս, ինչո՞վ կարող եմ քեզ օգնել: - Ասաց ու սկսեց հեկեկալ, լաց լինել: Դժվարանում էր խոսել: Ես կարծես հանգիստ լսում էի, բայց հանկարծ իմ սիրտն էլ փոթորկվեց: Աշխատում էի ինձ հանգիստ պահել, որ Ջանակ տատին ավելի չհուզեմ: Բայց տեսնելով, որ լացը չի կտրում, որպեսզի նրան այդ վիճակից դուրս բերեմ, հնարավորին չափ հանգիստ տոնով ասացի:

- Նամակը շատ երկար ստացվեց:

Վախենալով, որ վերջացնում եմ գրելը, անմիջապես ուշքի եկավ, իրեն հավաքեց

ու ասաց:


- Չէ՛, չէ՛, գրի՛ր: Տղաս, քո աչքերին, ձեռքերին, մամակ ստող ծայրիդ մատաղ: Բալիկս, կասես՝ ի՞նչ մայր էր, քեզ նման երեխային թողեց դժբախտության մեջ ու հեռացավ: Բայց ես քեզ անտեր չեմ թողել, բալիկս: Այդպես ստացվեց: Դու երևի հիշում ես, թե ինչ էր կատարվում: Ի՞նչ օրի էի ես ու քեզ համար ի՞նչ կարող էի անել, ոչնչով քեզ օգնել չէի կարող: Մեռներ քո մայրը, այդ օրերը չտեսներ:

Այստեղ Ջանակ տատիկի լացն ուժեղացավ: Որպեսզի նրա լացը կտրեմ, ներողություն խնդրեցի ու ասացի.

- Վերջացնենք գրելը:

Մի պահ մա մտքերի մեջ ընկավ, հետո ասաց, որ վերջացնում եմք, բայց կրկին սկսեց թելադրել:

- Բալիկս, շա՞տ սոված - ծարավ մնացիր, թե՞ չէ: Շա՞տ ինձ փնտրեցիր: Ա՛խ, բալիկս, արդյոք քեզ կտեսնե՞մ, թե՞ չէ: Գոնե աչքս թարթելու չափ ժամանակ քեզ տեսնեի ու հանձնվեի, որ կենդանի ես:



Սամվելը

Այսքան ասելուց հետո լռեց: Քիչ հետո ասաց, որ մնացածը ինքս գրեմ: Բայց ի՞նչ գրեի: Քիչ հետո ասացի, որ գրեցի, վերջացրի: Նա լուռ մտքերի մեջ ընկավ: Նկատվում էր, որ գոհ էր: Ուրախության շողերը թափառում էին դեմքին:

Մեկական նամակ էլ Ջանակ տատիկի անունից գրեցի հորհորդային Միուբյան ու Լիբանանի կառավարությունների արտաքին գործերի նախարարությունների հասցեներով, խնդրեցի գոնե մի րոպեով թույլ տան տեսնել Սամվելին, նշելով, թե երբ, որտեղ, ինչպես էր կորցրել Սամվելին 42 տարի առաջ: Նամակները ծրարեցի, գրեցի հասցեներն ու ասացի, որ նամակները պատրաստ են, ես փոստ կզցեմ: Բայց Ջանակ տատին անհանգստացավ, ասաց, որ նամակներն ինքը փոստ կզցի: Ապա՞ն նայում էր նամակներին, նրա ձեռքերը սկսեցին դողդողալ, դեմքի մկանները՝ խաղալ: Նրա դեմքին երևում էին նրա ներքնաշխարհի տրտունքի ու հույսի ալիքների տատանումները: Սի՛ ձեռքով, դանդաղ սկսեց արցունքները սրբել, մյուսով «ա՛խ, Սամվելս» ասելով վերցրեց նամակներն ու հարցրեց, թե դրանից ո՞րն է Սամվելի նամակը: Ցույց տվեցի: Ջանակ տատին Սամվելի նամակը դրեց կործին, հետո համբուրեց ու ասաց.

- Ա՛խ, Սամվելս, մի՞թե այս նամակը ձեռքդ պիտի առնես: Մեռնեմ քո թափկներին: Բալիկս, այս նամակի վրա թողած համբուրյուններս թող համարենք քո ձեռքերը: Այս ասելով դանդաղ կամգնեց: Վջբերը փակեց: Խոր շունչ քաշեց ու աչքերի արցունքները սրբելով ասաց.

- Լավ էր՝ անցածը չիռչել: Մնաց բարով, ես էլի կգամ, - ասաց ու գնաց: Դրանից հետո Ջանակ տատին ամեն մախի գալիս էր հարցնելու, թե ինչու նամակներին պատասխան չկա: Ամեն անգամ ասում էի, թե նման նամակների պատասխանը շուտ չի գալիս:

Անցավ վեց ամիս: Ոչ մի պատասխան: Կրկնեցի նամակները: Անցավ էլի 6 ամիս: Մի օր էլ նամակ ստացան, որ Սամվելին թույլատրել են 3 ամսով գալ Խորհրդային Միության, հյուր լինել մորը:

Ինչ խոսք, երևի թույլատրող մարդկանց զուրթ շարժվել էր, որ այդքան երկար ժամանակ էին տվել:

1964թ. հուլիսի վերջերին Սամվելից հեռագիր ստացան, որ «Արմենիա» նավով ընտանիքով Լիբանանից մեկնում է Օդեսա:

Մի խումբ ազգականներ թռան Օդեսա՝ Սամվելին դիմավորելու: Իսկ մի խումբ ազգականներ, հարևաններ ու համագյուղացիներ գնացին Ադլեր, այնտեղ դիմավորելու: Որովհետև Սամվելը օդանավով Օդեսայից

թռչելու էր Ադլեր:

Թե ինչ եղավ Օդեսայում, չգիտեմ, բայց մենք Ադլերում երկար սպասեցինք: Լուրն անմիջապես տարածվեց օդանավակայանում, որտեղ այդ ժամանակ եկող-գնացողների, հանգստացողների, ճանապարհորդների ու դիմավորողների եռուզեռ էր տիրում:

Մարդիկ, երբ իմացան, որ մայր ու որդի 43 տարի առաջ իրար կորցնելուց հետո պիտի հանդիպեն, դիմեցին դեպի այն դահլիճը, ուր պիտի մտնեին Օդեսայից եկողները: Այդ դահլիճում էին հավաքվել ծանոթ թե անծանոթ, հայեր, ռուսներ, վրացիներ ու այլ ազգերի մարդիկ:

Մեկ էլ շաղիոյով հաղորդեցին, որ Օդեսայից թռչող օդանավը վայրեց է կատարում: Յետն էլ ասացին, որ այդ օդանավով Բեյրութ է քիչ եկած հյուրը հանդիպելու է 43 տարի առաջ կորցրած մորը: Այդ հայտարարությունից հետո մեր դահլիճում այնքան մարդ հավաքվեց, որ ասել գցելու տեղ չկար: Շուտով եկան Օդեսայից թռչողները: Եկան Սամվելի կինն ու 8 տարեկան տղան՝ Իշխանը: Նրանց ուղեկցում էին Օդեսա դիմավորելու գնացողներից մի քանիսը: Իսկ Սամվելը չկար: Ասացին, որ այդ օդանավում տեղ չի եղել բոլորին, և որ Սամվելը երբ հաջորդ օդանավով:

Ջանակ տատին երբ իմացավ, որ Սամվելը չկա, դեմքի ժպիտը մարեց: Ձնոտ հայացքով մայեց մեկին-մյուսին, պարզելու համար, կատա՞կ եմ անում, թե՞ լուրջ եմ ասում: Բայց ոչինչ չհասկացավ: Սամվելի կնոջն ու երեխային դիմավորելուց հետո միայն հասկացավ, որ իրոք Սամվելը չկա: Սամվելի փոխարեն գրկել էր 8 տարեկան թռանը՝ Իշխանին, բայց դա նրան չէր հանգստացնում: Աստիճանաբար նրա ոտքերը թուլացան: Որպեսզի չընկնի, Ջանակ տատին դիմեց կողքին կանգնած մարդկանց օգնությանը և լալկան ծայրով ասաց.

- Ո՞ւր է Սամվելս, ո՞ւր է բալիկս: Ի՞նչ եղավ:

- Կգա՛, մայրիկ, կգա: Հանգստացի՛ր, շուտով կգա, - ասում էին Օդեսայից եկածները:

- Ինձ մի խաբեք, որտե՞ղ մնաց տղաս՝ Սամվելս: Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց: - Ասաց ու աչքերը չորս արած շարունակեց եկողների մեջ փնտրել Սամվելին: Բայց չգտնելով նրան՝ լրջացած ասաց.

- Կատակ ե՞ք անում, թե՞ մի բան պատահեց:

Այս անգամ մարդիկ ավելի լուրջ սկսեցին հասկացնել, որ ոչինչ չի պատահել, որ իրոք Օդեսայում բոլորին տեղ չի եղել օդանավում, որ Սամվելը կգա մի ժամ հետո՝ հաջորդ օդանավով: Բայց Ջանակ տատին կրկին կասկածում էր, թե կարո՞ղ է այդպես լինել, ու չէր հագստանում:

- Չէ՛, ո՞ւմ եք խաբում, - ասաց մա ավելի լրջացած ու բարձր ձայնով, իսկ հետո տեսնելով, որ կտեսնու չեն անում, ինչ-որ կասկածների մեջ ընկած ու խեղճացած, աղերսանք արտահայտող, մարդու ու լալկան ծայրով դիմեց բոլորին.

- Ո՞ւմ եք համոզում: Ի՞նչ պատահեց: Ինձ ճիշտն ասեք, ի՞նչ եղավ տղաս: Էլի՞ կորավ:

Այստեղ Ջանակ տատիկի աչքերը մթնեցին, գլուխը պտտվեց, ձայնը կտրվեց, արցունքները գլորվեցին այտերի վրայով: Անուժ, անօգնական դարձավ: Ամբողջ տեսքն արտահայտում էր մի այնպիսի հուսահատություն, որ կարծես էլ փրկություն չկար:

- Քեզ չեն ասում՝ մի տարի սպասիր, ասում են՝ մի ժամ սպասիր: 43 տարի սպասել ես, մի ժամ չե՞ս կարող սպասել, - ասաց համագյուղացիներից մեկը ու հետո ավելացրեց, - մի ժամ հետո եթե Սամվելը չգա, նոր կհարցնես, թե ո՞ւր է մա:

Տեղ գտան, Ջանակ տատին մտափոխեց: Ամեն կողմից հույս էին տալիս, հանգստացնում նրան: Բայց նրա արտասուքը չէր կտրվում: Հուսադրողներն այնքան շատ էին հավաքվել նրա գլխին, որ դա էլ իր երթին կասկածի առիթ էր տալիս: Համագյուղացիներից մեկը, տեսնելով Ջանակ տատիկի վիճակը, նրա մեծ աղջկան՝ Մարթային ասաց.

- Մարթա՛, մի քիչ դու հանգստացրու մորդ, որ հանկարծ կաթվածահար չլինի:

- Մայրիկ, - ասաց Մարթան հանգիստ, բայց ինչ-որ դժգոհ տոնով, - քեզ բոլորն էլ ասում են, որ օդանավում բոլորին տեղ չի եղել, որ Սամվելը կգա հաջորդ օդանավով: Էլ ի՞նչը պարզ չէ, որ կորցնում ես ինքը քեզ:

- Էդ ինչպե՞ս է, որ բոլորին տեղ է եղել, իսկ հենց Սամվելից տեղ չի եղել: Եթե բան է պատահել, ասեք, ի՞նչ եք թաքցնում, ձգձգում, - ասաց մա:

- Ոչ ոք ոչինչ չի թաքցնում, ոչինչ էլ չի պատահել: Քեզ ասում են՝ օդանավում տեղ

← չի եղել բոլորին: Էլ ի՞նչը պարզ չէ,- բարկացած տոնով վրա տվեց Մարթան: Իսկ հետո հանգիստ, ցածր տոնով ավելացրեց,- չէ՛ս տեսնում: Օղեսա դիմավորելու գնացողները բոլորը չեն վերադարձել: Չե՛ս տեսնում՝ եղբայրս՝ Գարուբյունը էլ չկա: Երան էլ տեղ չի եղել օդանավում, մնացել է Սամվելի հետ:

Ձանակ տատին, տեսնելով, որ իրոք Գարուբյունը էլ չկա, ձեռքերը դրեց կրծքին, խոր շունչ քաշեց ու ասաց.

- Եղայես ասեիք,- ու հանգստացավ:

Մի ժամ հետո ռադիոյով հաղորդեցին, որ Օղեսայից թռչող օդանավը վայրէջք է կատարում:

- Լսեցի՞ք, Ձանակ տատի, լսեցի՞ք, Օղեսայից եկավ հաջորդ օդանավը,- ասաց մեկը: Ուրախությունից Ձանակ տատիկի ձեռքերը սկսեցին դողալ, արտասովոր աչքերը փայլեցին ու այնպես առնչագացավ, որ չէիր ասի, թե պառակ է: Չմայելով մարդկանց խտությունը՝ նա մեզ հետ մոտեցավ ելքի դարպասին: Նա մի ձեռքը բերանին պահած անընդհատ կարծես ինչ-որ բան էր կուլ տալիս: Ասես ինչ-որ բան մնացել էր կոկորդում ու խանգարում էր խոսելուն:

Դարպասի մոտ երևաց Օղեսայից եկողների շարանը: Դահլիճում հավաքված մարդիկ մի կերպ ճանապարհ բաց արին Օղեսայից եկածների համար: Ինձ թվաց, թե բոլորն էլ ուզում էին ինձ նման եկողների մեջ հեռվից գուշակել, թե ո՞րն է Սամվելը:

Չեռվից եկողների մեջ նկատեցի Գարուբյունի կողքից քայլող միջահասակ, կլոր դեմքով, խոշոր աչքերով, կիսով չափ սպիտակած, կարճ կտրած մազերով, փողկապով, կոկիկ հագնված մի գեղեցիկ տղամարդու: Մտքում ասացի՝ երևի սա կլինի Սամվելը: Ու դա պարզելու համար աչքերս չէի հեռացնում նրանից:

Մի պահ դահլիճում լռություն տիրեց: Բոլորն էլ շունչները պահած սպասում էին հանդիպման երանելի պահին:

Երբ Օղեսայից եկածները մեզնից հեռու էին մոտ 2 մետր, չեն հիշում՝ ով էր ասաց.

- Արդյոք կճանաչի՞ մորը:

Այդ րոպեին մի կին իմ կողքին կանգնած Ձանակ տատիկն մի կողմ քաշեց, ինքն առաջ անցավ ու բարձր ձայնով ասաց.

- Սրանց մեջ ճանաչեցե՞ք Ձեր մորը:

Մեկ էլ այդ մարդը, որից աչքերս չէի հեռացնում, աչքերը չորս արած տեղումտեղը քարացավ: Գամայրկները ձեռքերից ընկան ցած: Ջարմացած, թե ինչ է կատարվում, մոլորված, անհամբեր, թափով մոլվեց առաջ: Նորից քարացավ: Չիմանալով, թե ինչ անի, նայեց չորս կողմն ու դիմելով բոլորին, հուսահատ, շունչը կտրված, ինչ-որ ոչ մարդկային ձայնով ասաց.

- Մի պահեք մորս:

Իսկ մյուս կողմից, քրթոթները կորցրած վիրավոր մայր արջի նման, անհամբեր՝ մարդկանց արանքից առաջ նետվեց Ձանակ տատիկն ու խեղդվող ձայնով գոռաց.

- Սամվել, տղաս,- ու նրանք գրկախառնվեցին: Երկուսն էլ արցունքոտ այտերով գրկում էին իրար, համբուրում:

Ոչ մի խոսք, ոչ մի ծայր: Չորս կողմն ասես մարդիկ քարացել էին:

Ձանակ տատիկն գրկել էր Սամվելին ու աչքերը փակել: Նրա փակ աչքերից 43 տարի կուտակված արցունքի գետն էր հոսում:

- Քիչ անց մեկն ասաց.

- Ձանակ տատի, մի քիչ հանգստացե՞ք, թողեք որ մենք էլ բարևենք:

Ձանակ տատիկն կարծես նոր արթնացավ, ուշքի եկավ ու թեքվելով դեպի իրեն դիմողը, ուրախությունից խելագարվածի նման փաթաթվեց նրան ու համբուրեց:

Դետո ում պատահե՞ր փաթաթվում էր, համբուրում, ասես բոլորն էլ նրա հարագատները լինեին:

Օդանավակայանում այդ օրը մեզ համար տոն էր: Շուտով նստեցինք մեքենաներն ու հյուրերի հետ մեկնեցինք Ձանակ տատիկի տուն: Այդ ու հաջորդ օրը Ձանակ տատիկի տանը կերուխում էր: Գավաքվել էր ամբողջ գյուղը:

Ձանակ տատիկն, Սամվելը վերհիշեցին իրենց գլխից անցածը: Բայց զգացվում էր, որ երկուսն էլ չէին ուզում անցածը մանրա-

մասն քրքրել ու իրար ցավ պատճառել: Մոր հարցին, թե ինչ պատահեց, որտեղ է ինչպես կենդանի մնաց, Սամվելը երկու խոսքով պատասխանեց, որ երբ նրանք մոտենում էին Դիարբեքի քաղաքին, նրանց հետապնդեցին թուրքերը: Ինքը փախավ անտառ, թաքնվեց: Թե ուր մնացին ընկերները, չգիտեր: Դետո անտառում միացավ փախստական հայերին: Իսկ մի տարի հետո, երբ ազատություն տվեցին, ինքը մնաց մեռակ, անտառի մարդիկ ցրվեցին: Սկսեց մուրացկանություն անել: Դետո բարի մարդիկ նրան տարան որբանոց, իսկ այնտեղից էլ ընկավ Բեյրութ:

- Ա՛խ, Սամվել, ինչքա՛ն ես մեծացել:

Մինչև որ քեզ չտեսա, կարծում էի, թե դեռ ութ տարեկան ես:

- Դրա համար եմ ութ տարեկան Իշխանին բերել,- ասաց Սամվելը:

Ձանակ տատիկն արտասուքն աչքերին գնաց սնդուկից հանեց որպես սրբություն պահած տոպրակը, որը հետն էր եղել քարի ճանապարհին, որի մեջ հացի փրկող փշրանքներն էր պահում: Ցույց տալով տոպրակը Սամվելին՝ հարցրեց.

- Սամվել, հիշո՞ւմ ես արդյոք այս տոպրակը, որ ամեն անգամ «հաց» ասելիս այս տոպրակին էիր նայում ու սրա շուրջը պտտվում:

Տեսնելով ծանոթ տոպրակը՝ Սամվելի շուրթերը դողացին, իրար սեղմվեցին, դեմքն ամպոտեց: Արցունքները գետի նման հոսեցին նրա այտերի վրայով: Սամվելը երկու ձեռքերով վերցրեց տոպրակն ու այդպես էլ բռնած տոպրակով դանդաղ ծածկեց երեսը: Դետո տոպրակով արցունքները սրբելով, հեկեկալով ասաց.

- Սուրբ տոպրակ, 43 տարի առաջ իմ կյանքը փրկեցիր, իսկ 43 տարի հետո իմ աչքերի արցունքները սրբեցիր: Խոնարհում եմ զուլխս քո առաջ:

Սամվելը տոպրակով երեսը ծածկած կուշտ լաց եղավ: Ձանակ տատիկի խիղճը տանջում էր, որ Սամվելին այդպիսի ցավ պատճառեց, բայց արդեն ուշ էր:

Սամվելի տղան՝ Իշխանը, հեռվից նկատեց, որ հայրը լաց է լինում և «հայրիկ» ասելով վազեց, փաթաթվեց հոր վզով ու հարցրեց.

- Դայրիկ, ի՞նչ պատահեց:

Սամվելը համբուրեց տղային ու ասաց.

- Ոչինչ, բալիկ: Ոչինչ չի պատահել:

Գնա խաղ արա: Ուտերիդ քար չդիպչի:

Այսպես շարունակվեց գրույցը: Պարզվեց, որ Սամվելն իր ազգանունը չգիտեր: Շատ որբերի նման, որոնք իրենց ազգանունները չգիտեին, քաջ Օգանյան Անդրանիկի ազգանունը իրենց ազգանունն էին դարձրել: Այդ ազգանունն էլ պատճառ էր եղել, որ Սամվելի հետ հանդիպումը ձգձգվել էր այսքան տարի:

Սամվելը շատ էր հետաքրքրվում, թե մայրն ինչ է հիշում անցյալից: Բայց Ձանակ տատիկն, ինչպես սասցինք, խուսափում էր անցածը վերհիշելուց, տրված հարցերին պատասխանում էր կցկտոր:

Երբ ամիս Սամվելն ընտանիքով հյուր եղավ մորը, եղավ երևանում: Երբ ամիս հետո ընտանիքով վերադարձավ Բեյրութ:

43 տարի անց իրար գտնելուց հետո բաժանվելն էլ հեշտ չէր: Երբ իրար հրաժեշտ էին տալիս, Սամվելը լացելով ասաց.

- Մայրիկ, ի՞նչ խոսք, որ բաժանվելու ենք, գնալու եմ տուն՝ Բեյրութ: Եթե ասեն, թե քեզնից կարոտս առա, մի հավատա: Հագար տարի էլ քո մոտ լինեմ, կարոտս չեմ կարող առնել: Ի՞նչ արած, այնտեղ էլ իմ երեխաներն են սպասում իրենց ծնողներին: Ողջ-առողջ եղեք, բոլորդ:

- Գնացե՛ք բարով, տղաս,- լալով ասաց Ձանակ տատիկն,- լավ եղեք, էլի եկեք: Դիմա թեկուզ մահանամ էլ, սրտիս ցավ չէ: Աստծո ձեռքը ձեզ վրա լինի: Գնացե՛ք բարով: Սեզ մի մոռացե՛ք: Շուտ-շուտ գրե՛ք:

Նրանք արցունքները սրբելով, հայացքներով իրար գուրգուրելով բաժանվեցին:

**Գագրա-Գանթիաղի, 1965թ.**

*Ծանոթություն. Ձանակ տատիկն մահացավ 1987թ., թաղված է Օտլուղի գերեզմանոցում: Նրա խնորհանքով նրա հետ թաղվել է հացի տոպրակը, որի վրա մնացել էին Սամվելի արցունքները: Այս բոլորին վկա է ամբողջ գյուղը: 1989թ.*

### ՆՍՈՒՇՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԿԻՆԻ ՆԱՅԱՆԳԻ ԽՈՓԱՅԻ ԳԱՎԱՌԻ ԿՐՈՆԱՓՈՒՑ ԶԱՄՇԵՆԱՐԱՅԵՐԻ ԲԱՆԱՐՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

#### ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՅ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող

\*\*\*

Աս քեղես վազա գերթա, Սեվդան փութ գենա, գերթա, Ի՞նչ էնիմ աման սեվդան, Զօքիս ալ քոլա գերթա:

(Այս գետը հոսում, գնում է, Սիրածը նայում, գնում է, Ի՞նչ անեմ այդպիսի սիրածը, Զոգիս էլ այրում, գնում է):

\*\*\*

Քեղին քեղալքօջիգե Սեձենցավ, մեձ քօղ աղավ, Վարաթ գանչեցի դէյի, Թաքիդիմ մեձ մարթ աղար:

(Գետում շերեփուկը Մեծացավ, մեծ գորտ դարձավ, Քո մասին որ երգեցի, Կարծես մեծ մարդ դարձար):

\*\*\*

Չաղացքն ի վար էրթաս բա, Չուրե յեթ քօղ գօր մէ ասնի, Իմ սերդիս քաշածնիյես Բիթուն քու քելխուդ անցնի:

#### Մատնախաղ

**Ծողոցներից կամ ավազներից մեկը բռնում է փոքր երեխայի (սովորաբար շուրջ 3-5 տարեկան) ձեռքը և հերթով ծախելով նրա մատները, ասում է.**

- Փունթ մադե աստած ունի.
- Ուղիք, ուղիք...
- Ցուցամադե աստած ունի.
- Ուստի՞ ուղիք:
- Մէջբեղադի մադե աստած ունի.
- Թադիք, ուղիք:
- Մադնի մադե աստած ունի.
- Յես քօլնօղ ում:
- Ջգուրե աստած ունի.
- Յես ալ ասօղ ում:

#### Քալաշօղի Մամնէթին հէքիյան

Խիգօեցի Քալաշօղի Մամնէթին ցին մերնի գու: Շադ մեղեվի գու: Մեղեվի գու անա էնգերաքե գասին թա.

- Մամնէթ, ինչի՞ մեղեվիս գու: Ասքվածե քու ցին ալի գուդա:
- Է՛, էնգեր,- գասա Մամնէթ,- յես իմ Ասքվածե քիդին, իմ սան փանգանօթս\* արնելու ցին ինձի դէվօղ չա,- գասա:

\* Փանգանօթ - բանկնոտ, արժեթուրթ

**Գրառել եմ 2010թ. հուլիսին Բիլբիլան լեր յայլայում, գյուղացիների հետ զրույցի ժամանակ: Նաև ասացին, որ Մամնէթը երկու ամիս առաջ մահացել է:**

#### Քալաշօղի Մամնէթի պատմությունը

(Թարգմանություն)

Խիգոյեցի Քալաշօղի Մամնէթի ծին սատկում է: Շատ է մտածում: Որ մտածում է, ընկերներն ասում են.

- Մամնէթ, ինչո՞ւ ես մտածում: Աստված քո ծին էլի կտա:
- Է՛, ընկեր,- ասում է Մամնէթ,- ես իմ Աստծուն գիտեմ, առանց իմ քսան արժեթուրթն առնելու ինձ ծի տվող չի,- ասում է:

(Ջրաղաց որ իջնես, Ջուրը բաց թող ուժեղ անցնի, Իմ սրտի քաշածները Բոլորը քո գլխին գան):

\*\*\*

Ինջե խարխանիմ՝ օղե, Յես խերլիօղ ում սօղե, Յես մեք խերալ շեմեն իմ Քեգի արնօղ ում սօղե:

(Ինջե խարխանի բլուրը, Ես ի վերջո խելագարվելու եմ, Ես մի խելառ գյուղից եմ, Ի վերջո քեզ առնելու եմ):

\*\*\*

Փարցե գերթա մերալե, Քեզ լերե փօթօ՞ղ ա թա, Յե՛ք քերգին, քու թօրե Իմ հօքիս հօմօ՞ղ ա թա:

(Բարձր է գնում ամպը, Տեսնես յայլա հասնելո՞ւ է, Քեռակին, քո թոռը Իմ հոգին հանելո՞ւ է):

\*Ինջե խարխան-տեղանուն Արդահանի սարերում՝ Բիլբիլան յայլայի մոտ:  
\*\*Յե - ավազին հարգալից դիմելանալ:

(Թարգմանություն)

- (Բութ մատն ասել է.
- Ուտենք, ուտենք:
- Ցուցամատն ասել է.
- Որտեղի՞ց ուտենք:
- Միջամատն ասել է.
- Աշխատենք, ուտենք:
- Մատնեմատն ասել է.
- Ես կգողանամ:
- Նկույթն ասել է.
- Ես էլ կասեմ):

**Այնուհետև նա երեխայի մատներն այնպես է շարժում, իրր նրանք իրար հետ կրվում են, իրար ծծում:**

**Գրառել եմ Քեմալիաշայում՝ գյուղացիների հետ զրույցի ժամանակ:**

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակական-քարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն հանձնակամին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org